ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 19 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի ավագանու 19-ը փետրվարի 2024թ. չորրորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ավագանու 20.12.2023թ. թիվ 165Ն որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու 24.11.2023թ. թիվ 151Ա և 152Ա որոշումները նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

4.Եղեգիս համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավարման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին,

5.Հերմոն գյուղի հիմնական դպրոցի անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով գույք ձեռք բերելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին նվիրատվությամբ անհատույց հանձնելու մասին,

6.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,4194հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

7.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,103հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

8.Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

9.Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ

Կողմ՝ 9 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 20 Ն

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2023 Թ. ԹԻՎ 165Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 165Ն որոշման կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 7	Դեմ՝ 1	Ձեռնպահ՝ 1
Ստեփանյան Արթուր	Միքայելյան Քրիստինա	Սմբատյան Մամիկոն
Մարտիրոսյան Նարեկ		
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***		
Հակոբյան Արտուշ		
Պողոսյան Հրաչյա		
Մանուկյան Սաթինե ***բացակա***		
Նազարյան Արգիշտի		
Ղահրամանյան Վարդան		
Գաբրիելյան Ահարոն		
Սմբատյան Արսեն ***բացակա***		
Բաբայան Վահե ***բացակա***		
Հարությունյան Կարեն ***բացակա***		
Ստեփանյան Սաշա ***բացակա***		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 20Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1)հիմնական շենքերի և շինությունների համար

ա.մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

2)Սույն կետի 1) ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար հաշվի առնելով, որ Եղեգիս համայնքում ընդգրկված գյուղերի գոտիականությանը համապատասխանող գործակիցը 1.0 է (գյուղերը գտնվում են 17-20 գոտում)՝

ա.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

բ.501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

գ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար Հերմոն, Գողթանիկ, Հորբատեղ, Աղնջաձոր, Հորս, Քարագլուխ լեռնային բնակավայրերում և Սևաժայռ, Գետիկվանք, Վարդահովիտ, Արատես, Կալասար բարձրլեռնային բնակավայրերում 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, Շատին, Արտաբույնք, Եղեգիս, Թառաթումբ, Սալլի բնակավայրերում 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

դ.3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար Հերմոն, Գողթանիկ, Հորբատեղ, Աղնջաձոր, Հորս, Քարագլուխ լեռնային բնակավայրերում և Սևաժայռ, Գետիկվանք, Վարդահովիտ, Արատես, Կալասար բարձրլեռնային բնակավայրերում 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, Շատին, Արտաբույնք, Եղեգիս, Թառաթումբ, Սալլի բնակավայրերում 1000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

3)ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ,

բ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության

թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և **բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից,** կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույլցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

4)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների 300 քառակուսի մետրից ավել ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ,
- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 000 (երկու հարյուր հազար դրամ),
- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ,
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար, ինչպես նաև 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 2000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրեսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4.Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.

1)համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.

5.Սևաժայռ, Գետիկվանք, Վարդահովիտ, Արատես, Կալասար բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ.

1) Սևաժայռ, Գետիկվանք, Վարդահովիտ, Արատես, Կալասար բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ.

2) Սևաժայռ, Գետիկվանք, Վարդահովիտ, Արատես, Կալասար բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

7.Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

7.1. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 (հինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 500 (տաս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 500 (տասնհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20 500 (քսան հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30 500 (երեսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

7.2. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8500 (ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 500 (տասնհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

8.Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ 10 (տասը) հազար դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

9.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

10.Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ 10100 (տաս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ շինությունների դեպքում՝ 13100 (տասներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 (քսան հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 (քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

գ.500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 (քառասունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

2)ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 (տաս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 (տասներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 (քսան հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

ե.200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 (քսանհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,

զ.500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 (քառասունհինգ հազար մեկ հարյուր) դրամ,

11Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

12.Համայնքի վարչական տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ.

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

3)այլ արտաքին գովազդի 1500 դրամ. համար՝

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

13.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,
4) խաղատների համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
5) շահումով խաղերի համար՝ 200 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,
6) վիճակախաղերի համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

14.Համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշը (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ ***100000 (մեկ հարյուր* հազար)** ՀՀ դրամ:

15.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

16.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

17.Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
1)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,
2)5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
3)7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,
4)10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 (հինգ միլոն միլիոն) ՀՀ դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու դիմաց փոխհատուցման վճար 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

5.Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

6.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար մասնակիցներից վճար՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

7.Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

9.Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ, կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

1)ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ, կամ

2)ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ դրամ:

3)Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

4)Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 50(հիսուն) ՀՀ դրամ:

5)Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 30(երեսուն) ՀՀ դրամ:

6)Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) ՀՀ Հայաստանի Հանրապետության դրամ.

7)Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 10 (տաս) ՀՀ դրամ:

8)Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (դրամ) ՀՀ դրամ:

9)Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել մեկ ամսվա համար 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ:

10)Շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

11)Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) ՀՀ դրամ:

10.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ
3) մեկ շաբաթվա համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ
4) մեկ ամսվա համար՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ
5) մեկ տարվա համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար րոպեների հաշվարկման մեթոդ:

11.Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

12.Խմելու ջրի վարձավճարի չափը սահմանել ամսական 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ մեկ շնչի հաշվով:

13.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային արոտներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

14.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

15.Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների վճար սահմանվում է՝

Ծննդօգնություն

1)Թեթև միջամտություն՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ,

2)Ծանր միջամտություն 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

16.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»ը՝ պետական ծրագրում ընդգրկված Հակաանասնահամաճարակային միջոցառումներ)՝

1)Մանր կենդանի 50 (հիսուն) ՀՀ դրամ,

2)Խոշոր կենդանի 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:

17.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 500 (հինգ հարյուր) դրամ:

18.Ախտահանություն՝ 1 քառ. մետր 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

19.Միջատազերծում (դեզինֆեկցիա)՝ 1 քառ. մետր 150 (մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

20.Կրծողների դեմ պայքար (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ:

21.Արհեստական սերմնավորում խոշոր եղջերավոր, խոզեր՝ 6000 (վեց հազար) ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 21 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24/11/2023 Թ. ԹԻՎ 151Ա ԵՎ 152Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

*1.*Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 24-ի «Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 151Ա որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 7 (յոթ) տարի ժամկետով տրամադրել «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության Հարավային Կովկասում էկոմիջանցքների

աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով՝

1)կադաստրային ծածկագիր 10-035-0270-0017, մակերեսը 150,4179հա, որից 4,7233հա վարելահող և 145,6946հա այլ հողատեսք,
2)կադաստրային ծածկագիր 10-035-0268-0006, մակերեսը 98,9387հա, որից 5,339հա վարելահող և 93,5997հա այլ հողատեսք,
3)կադաստրային ծածկագիր 10-035-0265-0001-ից, մակերեսը 89,67219հա, որից 4,95047հա վարելահող և 84,72172հա այլ հողատեսք,
4)կադաստրային ծածկագիր 10-035-0260-0001, մակերեսը 58,5187հա, որից 0,9614հա վարելահող և 57,5573հա այլ հողատեսք,
5)կադաստրային ծածկագիր 10-035-0259-0019, մակերեսը 123,24389հա, այլ հողատեսք:
6)Սերվիտուտի տրամադրման տարեկան վարձավճար սահմանել մեկ հեկտարի համար 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:
7)Չխոչընդոտել համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 24-ի «Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 152Ա որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 7 (յոթ) տարի ժամկետով տրամադրել «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության Հարավային Կովկասում էկոմիջանցքների աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով՝

1)կադաստրային ծածկագիր 10-029-0129-0002, մակերեսը 93,7311հա, որից 78,3011հա արոտավայր, 1,37հա վարելահող, 5,94հա խոտհարք և 8,12հա այլ հողատեսք,

2)կադաստրային ծածկագիր 10-029-0128-0001-ից, մակերեսը 114,278հա, որից 2,7644հա վարելահող, և 111,5136հա այլ հողատեսք:

3)Չխոչընդոտել համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը:»:

Կողմ՝ 7	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 2
Ստեփանյան Արթուր		Սմբատյան Մամիկոն
Մարտիրոսյան Նարեկ		Միքայելյան Քրիստինա
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***		
Հակոբյան Արտուշ		
Պողոսյան Հրաչյա		
Մանուկյան Սաթինե ***բացակա***		
Նազարյան Արգիշտի		
Ղահրամանյան Վարդան		
Գաբրիելյան Ահարոն		
Սմբատյան Արսեն ***բացակա***		
Բաբայան Վահե ***բացակա***		
Հարությունյան Կարեն ***բացակա***		
Ստեփանյան Սաշա ***բացակա***		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 22 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 84-րդ հոդվածի պահանջերով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի 2024թ-ի բյուջեում հատկացնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

2.Սահմանել, որ՝

1)մասնակցային բյուջետավարման գործընթացի իրականացման համար կիրառելի են բյուջետային օրենսդրությամբ սահմանված բոլոր գործառնական ոլորտները՝ համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի համար:

2)մասնակցային բյուջետավարման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր)

3)մասնակցային բյուջետավարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

3.Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը, որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում, բյուջեում և 2024թ. միջնաժամկետ ծախսային ծրագրում՝ համայնքի բնակիչների կողմից քվերակության

արդյունքում ընտրված առաջարկը (ները) ներկայացնելով ավագանու հավանությանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***
Բաբայան Վահե ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Միքայելյան Քրիստինա
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19-ը փետրվարի 2024 թվականի N 23 Ա

ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՆԽԱՓԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով ձեռք բերել մեկ հատ էլեկտրական ջրի պոմպ (30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ) և նվիրատվությամբ անհատույց հանձնել «Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին:

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***
Բաբայան Վահե ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Միքայելյան Քրիստինա
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 24 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,4194 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0231-0074, մակերեսը 0,4194հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոս:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 9
Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***

Դեմ՝ 1
Մարտիրոսյան Նարեկ

Ձեռնպահ՝ 0

Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 25 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,103 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.
կադաստրային ծածկագիր 10-035-0040-0041, մակերեսը 0,103հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 (երկու հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 7	Դեմ՝ 3	Ձեռնպահ՝ 0
Ստեփանյան Արթուր	Մարտիրոսյան Նարեկ	
Մարտիրոսյան Զոյա	Միքայելյան Քրիստինա	
Հակոբյան Արտուշ	Սմբատյան Մամիկոն	
Պողոսյան Հրաչյա		
Մանուկյան Սաթինե ***բացակա***		
Նազարյան Արգիշտի		
Ղահրամանյան Վարդան		
Գաբրիելյան Ահարոն		
Սմբատյան Արսեն ***բացակա***		
Բաբայան Վահե ***բացակա***		
Հարությունյան Կարեն ***բացակա***		
Ստեփանյան Սաշա ***բացակա***		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19-ը փետրվարի 2024 թվականի N 26 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի մարտի 29-ին, ժամը 15:00-ին:

Կողմ՝ 10 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***
Բաբայան Վահե ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***
Միքայելյան Քրիստինա
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19-ը փետրվարի 2024 թվականի N 27 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 13/02/2024թ. թիվ36Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Քանակը /հատ/	Միավորի գինը	Գումարը/դրամ/
1.	Բազմաֆունկցիոնալ սարք (Multifunction printerCanon i-sensys MF463dw)	1	237900	237900

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 2

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե ***բացակա***
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Սմբատյան Արսեն ***բացակա***
Բաբայան Վահե ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

Սմբատյան Մամիկոն
Միքայելյան Քրիստինա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**